*Հաստատված է*
*Եվրոպական Համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2019 թվականի հունիսի 06-ի*
*թիվ 09 նիստում*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

*Approved*
*at the No. 09 session*
*of the Scientific Council*
*of the European University,*
*June 6, 2019,*
*Rector: H. Bisharyan*

***Լրամշակված է***
*Հայաստանի Եվրոպական Համալսարանի*
*գիտական խորհրդի*
*2023 թվականի հոկտեմբերի 23-ի*
*թիվ 45 նիստում,*
*Ռեկտոր՝ Հ. Բիշարյան*

***Reviewed***
*at the No. 45 session*
*of the Scientific Council*
*of the European University of Armenia,*
*October 23, 2023,*
*Rector: H. Bisharyan*

____________________
(ստորագրություն, Կ.Տ./ signature)

# ԿԱՐԳ
# ՀԵՀ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ, ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ

# ORDER
# ON SUMMATIVE CERTIFICATION, PREPARATION, DEFENSE, ASSESSMENT AND APPEAL OF THE MASTER'S THESIS OF THE EUA MASTER'S DEGREE GRADUATES

## *1. Ընդհանուր դրույթներ*

1.1 Սույն կարգը նախատեսված է ՀԵՀ մա-գիստրատուրայի առկա և հեռակա կրթական ծրագրերով ամփոփիչ ատեստավորում իրականացնելու համար:

1.2 ՀԵՀ Մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտի գիտելիք-ների, կարողությունների և հմտությունների ստուգումն է, որն իրականացվում է մագիս-տրոսական թեզի պաշտպանությամբ՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից:

1.3 ՀԵՀ մասնաճյուղերի մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորումը կազմակերպվում է սույն կարգի համաձայն տվյալ մասնաճյուղում:

1.4 Մագիստրոսական թեզը գիտական վերլուծական և/կամ կիրառական ինքնուրույն հետազոտական աշխատանք է, որը պետք է համապատասխանի գիտության զարգացման ժամանակակից մակարդակին, լինի արդիական և արտացոլի տվյալ ոլորտի արդի խնդիրները և դրանց լուծումները:

## *1. General Provisions*

1.1 This Order is to carry out the summative certification of the EUA Master's degree programs for full-time and part-time studies.

1.2 The summative certification of the EUA Master's degree is the verification of graduate’s knowledge, abilities and skill, which is carried out by the defense of the Master's thesis by the summative certification committee.

1.3 The Master's summative certification of EUA branches is organized according to this Order in the specific branch.

1.4 The Master's thesis is a scientific analytical and/or applied independent research work, which must correspond to the modern level of science development, be up-to-date and reflect the current issues of the specific field and their solutions.

1.5 Մագիստրոսական թեզի նպատակն է խորացնել մագիստրանտի ստացած տեսական, գործնական գիտելիքներն ու հմտությունները, զարգացնել ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու ունակությունները, տիրապետել հետազոտությունների մեթոդներին և լուծել որոշակի գիտական խնդիրներ:

1.6 Մագիստրոսական թեզում պետք է ներկայացվի.

- ընտրված թեմայի արդիականության հիմնավորումը,
- հետազոտության նպատակը և խնդիրները,
- հետազոտության օբյեկտը և առարկան,
- հետազոտության մեթոդները
- հետազոտության ընթացքի նկարագիրը,
- հետազոտության արդյունքները,
- եզրակացությունները, առաջարկությունները և/կամ լուծումներ:

1.7 Մագիստրոսական թեզը գնահատվում է 100 միավորանոց համակարգով:

1.5 The purpose of the Master’s thesis is to make the student's theoretical and practical knowledge and skills fundamental, to develop the ability to do independent research work, to master research methods and to solve certain scientific issues.

1.6 The Master’s thesis should include:

- justification of the relevance of the chosen topic;
- the purpose and objectives of the research;
- the object and subject of the research;
- research methods;
- description of the research process;
- research results;
- conclusions and recommendations.

1.7 The Master’s thesis is assessed according to a 100-point grading system.

## *2. Մագիստրոսական թեզի նախապատրաստումը*

2.1 Մագիստրոսական թեզի թեմաները և ղեկավարները ուսումնառության առաջին ուստարվա առաջին կիսամյակում որոշվում և հաստատվում են մասնագիտական ամբիոնների կողմից և ներկայացվում են ՀԵՀ գիտխորհրդի հաստատմանը:

2.2 Մագիստրոսական թեզի գիտական ղեկավար են նշանակվում մասնագիտական ամբիոնի դասախոսները, որոնք ունեն գիտական աստիճան:

2.3 Գիտական ղեկավարը թեզի պատրաստման գործընթացում կատարում է հետևյալ աշխատանքները.

- մասնակցում է մագիստրոսական թեզի պլանի կազմմանը,
- խորհուրդ է տալիս հետազոտության մեթոդների ընտրության հարցում,
- խորհուրդ է տալիս օգտագործել անհրաժեշտ մասնագիտական գրականություն, այդ թվում՝ էլեկտրոնային գրականություն, վիճակագրական

## *2. Preparation of Master’s thesis*

2.1 Master’s thesis topics and supervisors are determined and approved by professional chairs in the first semester of the first academic year. Later on, they are submitted to the EUA Scientific Council for approval.

2.2 Academic staff of the chair, who have a scientific degree, are appointed as scientific supervisors of Master’s thesis.

2.3 The scientific supervisor performs the following tasks in the process of preparing the Master’s thesis:

- participates in the preparation of the Master’s thesis plan;
- advises on the selection of research methods;
- recommends using the necessary professional literature, including electronic literature; statistical reference

| | |
|---|---|
| տեղեկատուներ, արխիվային նյութեր և թեմայի հետ կապված այլ աղբյուրներ,<br>• հաստատված ժամանակացույցով անցկացնում է նախատեսված պարբերական խորհրդատվություններ,<br>• գնահատում է կատարված աշխատանքը՝ ինչպես մաս-մաս, այնպես էլ ամբողջությամբ,<br>• ստուգում է աշխատանքի էլեկտրոնային տարբերակը «antiplagiat etxt» ծրագրով և ներկայացնում է ամբիոն,<br>• տալիս է իր համաձայնությունը մագիստրոսական թեզը հրապարակային պաշտպանության ներկայացնելու համար՝ ներկայացնելով գրավոր կարծիք (հավելված 3): | books, archival materials and other sources related to the topic;<br>• conducts planned regular consultations according to the approved schedule;<br>• assesses the conducted work, both in parts and in whole;<br>• checks the electronic version of the work through the "Anti-Plagiarism text" program and presents it to the chair;<br>• gives his consent to submit the Master's thesis for public defense by submitting a written feedback on the work (appendix 3). |
| 2.4 Գիտական ղեկավարը ուղղորդում է մագիստրանտի աշխատանքը: Եթե ղեկավարը թեզը թույլատրում է հրապարակային պաշտպանության, ապա պատասխանատու է ստացված արդյունքների և գրագողության բացակայության համար: | 2.4 The scientific supervisor directs the student's work. If the supervisor allows the work to be publicly defended, he/she is responsible for the obtained results and the absence of plagiarism. |
| 2.5 Մագիստրոսական թեզը, ղեկավարի գրավոր կարծիքի առկայությամբ, ենթակա է գրախոսման: | 2.5 The Master's thesis, with the written positive feedback of the supervisor, is subject to review. |
| ***3. Մագիստրոսական թեզի ձևավորման պահանջները*** | ***3. Requirements for preparing the Master's thesis*** |
| 3.1 Մագիստրոսական թեզի յուրօրինակու-թյունը պետք է կազմի առնվազն 90%: | 3.1 The originality of the Master's thesis must be at least 90%. |
| 3.2 Մագիստրոսական թեզի ծավալը պետք է լինի 60- 70 էջ: | 3.2 The volume of the Master's thesis should be at least 60-70 pages. |
| 3.3 Մագիստրոսական թեզը պատրաստվում է MS WORD ծրագրով: | 3.3 The Master's thesis is written with MS WORD program. |
| 3.4 Սահմանվում են մագիստրոսական թեզի էջերի հետևյալ չափերը(Page Setap և Paragraph), տե՛ս աղյուսակ 1. | 3.4 The following dimensions of Master's thesis pages (Page Setup and Paragraph) are defined (see Table 1.) |

Աղյուսակ 1. Մագիստրոսական թեզի էջերի չափերը և պահանջները/
Table 1. Dimensions and requirements for master's thesis pages

| | | |
|---|---|---|
| Թղթի ձևաչափը/Paper size | | A4 (21.0x29.7) |
| Տառատեսակ/Font(հայերեն լեզվի համար/ for Armenian) | | Sylfaen/GHEA Grapalat |
| Տառատեսակ/Font(անգլերեն և այլ լեզուների համար/ for English and other languages) | | Times New Roman |
| Քանոններ/Page Layout՝ | Վերև/Top | 2 սմ/2cm |
| | Ներքև/Bottom | 2 սմ/2cm |
| | Ձախ/Left | 3սմ/3cm |
| | Աջ/Right | 1սմ/1cm |
| Տառաչափ/Size | | 12 |
| Միջտողային տարածություն/Line spacing | | 1,5 |
| Tab | | 1սմ/1cm |

3.5 Մագիստրոսական թեզի էջերը պետք է համարակալել՝ էջի ստորին հատվածում, կողմնորոշումը՝ աջ: Տիտղոսաթերթի և բովանդակության էջերը չեն համարակալվում:

3.6 Հղումները և աշխատանքին վերա-բերող ծանոթագրությունները պետք է տեղադրվեն տողատակում:

3.7 Բոլոր հղումներում, մեջբերումներում պետք է նշվեն հեղինակի, աշխատության անվանումը, հրատարկչության վայրը, տարեթիվը և էջը (էջերը)՝ բնագրի լեզվով: Էլեկտոնային նյութերից հղումներ կատարելիս պետք է նշել էլեկտրոնային կայքի հասցեն, այդ կայքի այն որոշակի էջը, որից կատարվել է հղումը, ինչպես նաև վերջին դիտման ամսաթիվը:

3.8 Մագիստրոսական թեզում ներառված աղյուսակները, գծանկարները, նկարները, բանաձևերը պետք է համարակալվեն և վերնագրվեն:

3.5 The pages of the Master's thesis should be numbered at the bottom of the page, orientation on the right. Title page and contents pages are not numbered.

3.6 References and annotations related to the work should be placed in the footnotes.

3.7 In all references, citations, the author, the title of the work, the place of publication, the year and the page(s) should be indicated in the source language. When making references/links from electronic materials, it is necessary to cite the address of the electronic site, the specific page of that site, the title of the material, as well as the date of last viewing.

3.8Tables, drawings, pictures, formulas included in the work must be numbered and titled.

### *4. Մագիստրոսական թեզի կառուցվածքը*

4.2Մագիստրոսական թեզը ունի հետևյալ կառուցվածքը.

- Տիտղոսաթերթ *(հավելված 1),*
- Բովանդակություն *(հավելված 2),*
- Ներածություն,
- Հիմնական գլուխներ,
- Եզրակացություններ և առաջարկություններ,
- Օգտագործված գրականության ցանկ,
- Հավելվածներ:

### *4. The structure of the Master's thesis*

4.1 The Master's thesis has the following structure:

- Title page (appendix 1);
- Contents (appendix 2);
- Introduction;
- Main chapters;
- Conclusions and recommendations;
- References;
- Appendices.

## 5. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը

5.1 Ավարտուն մագիստրոսական թեզը ներկայացվում է գիտական ղեկավարին, որը մեկ անգամ ևս վերանայում է աշխատանքը և ստուգում է աշխատանքի էլեկտրոնային տարբերակը «antiplagiat etxt» ծրագրով:

5.2 Ղեկավարը իր կարծիքը ներկայացնում է գրավոր *(հավելված 3):* Ղեկավարը իր կարծիքում եզրակացություն է տալիս մագիստրոսական թեզին ներկայացվող պահանջներին համապատասխանության վերաբերյալ և թույլատրում պաշտպանության:

5.3 Մագիստրոսական թեզի հանձնման վերջնաժամկետից առնվազը 15 օր առաջ համապատասխան ամբիոնը կազմակերպում է մագիստրոսական թեզի նախապաշտպանություն՝ ամբիոնի վարիչի, դասախոսների և մագիստրոսական թեզի ղեկավարների ներկայությամբ:

5.4 Մագիստրոսական թեզի նախապաշտպանությունը չանցած մագիստրանտները սահմանված առնվազը 5 օրյա ժամկետում արված դիտողությունները վերացնելուց հետո կրկին անցնում են նախապաշտպանություն:

5.5 Մագիստրոսական թեզի պաշտպանու-թյան թույլատրվում են միայն նախապաշտպանությունն անցած մագիստրանտները:

5.6 Ավարտական ուստարվա մինչև ապրիլի 1-ը՝ առկա ուսուցման համակարգում սովո-րողների համար և մինչև նոյեմբերի 1-ը՝ հեռա-կա ուսուցման համակարգում սովորողների համար, մագիստրոսական թեզը ղեկավարի դրական կարծիքով և աշխատանքի գրագո-ղության (plagiat) ստուգված տարբերակով, որում աշխատանքի յուրօրինակությունը պետք է կազմի առնվազն 90%, ինչպես նաև աշխատանքի էլեկտրոնային տարբերակով, ներկայացվում են ամբիոն:

5.7 Ամբիոնը մագիստրոսական թեզը, սույն կարգին համապատասխան ուղարկում է արտաքին գրախոսման: Գրախոսը գրախոսությունը ներկայացնում է գրավոր *(հավելված 4)*: Մագիստրոսական թեզերի գրախոսման համար

## 5. Defense of Master's thesis

5.1 The completed Master's thesis is submitted to the scientific supervisor, who once again reviews the work and checks the electronic version of the work through the program "Anti-Plagiarism text".

5.2 The scientific supervisor submits his feedback in a written form (Appendix 3). In his feedback, the supervisor gives a conclusion on compliance with the requirements of the Master's thesis and approves the defense.

5.3 At least 15 days before the deadline for the submission of the master's thesis, the relevant chair organizes a pre-defense of the Master's thesis in the presence of the head of the department, professors and supervisors of the Master's thesis.

5.4 Students, who have not passed the pre-defense of the Master's thesis, after eliminating the remarks made within the specified period of at least 5 days, pass the pre-defense again.

5.5 The students, who have passed the pre-defense, are approved to defend their Master's thesis.

5.6 By April 1 of the graduation/final academic year, for students in the full-time learning system and by November 1 for students in the part-time learning system, forms are specified. The master's thesis with the positive opinion of the supervisor and the checked version of plagiarism, in which the originality of the work should be at least 90%, as well as the electronic version of the work, is submitted to the chair.

5.7 The chair sends the Master's thesis for external review in accordance with the EU review form. The reviewer submits the review in a written form (appendix 4). Relevant specialists of the chair, leading organizations

հրավիրվում են ոլորտի առաջատար կազմակերպությունների, գիտական հիմնարկների և այլ հաստատությունների համապատասխան մասնագետները: ԵՀ հիմնական աշխատողը չի կարող լինել արտաքին գրախոս:

5.8 Մագիստրոսական թեզի պաշտպանությունից 1-2 օր առաջ մագիստրոսը իրավունք ունի ծանոթանալ գրախոսի դիտողություն-ներին և պատրաստել դրանց պատասխան-ները՝ ընդունելով կամ մերժելով դրանք հիմնավոր փաստարկներով:

5.9 Մագիստրոսական թեզի պաշտպանու-թյան թույլատրվում են այն շրջանավատները, ովքեր ավարտել են կրթական ծրագրով ուսուցումը և կուտակել են համապատասխան կրեդիտներ: Մագիստրոսական թեզի պաշտ-պանության թույլատրվող շրջանավարտների ցանկը ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատում է ԵՀ ռեկտորը՝ ամփոփիչ ատեստավորումից 2 շաբաթ առաջ:

5.10 Մագիստրոսական թեզի պաշտպանությունը անցկացվում է առկա ուսուցման համակարգում սովորողների համար՝ մայիս ամսին, հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար՝ դեկտեմբեր ամսին:

5.11 Մագիստրոսական թեզը թույլատրվում է պաշտպանության ղեկավարի և գրախոսի դրական կարծիքի, աշխատանքի համապատասխան յուրօրինակության ապահովման և ամբիոնի վարիչի թույլտվության պարագայում:

5.12 Մագիստրոսական թեզը չի թույլատրվում պաշտպանության, եթե.

- շրջանավարտը չի ավարտել տեսական դասընթացը,
- խախտել է մագիստրոսական թեզի կատարման պահանջները,
- առկա է մագիստրոսական թեզի ներկայացման ժամկետների և ձևի անհամապատասխանություն,
- բացակայում է ղեկավարի կամ գրախոսի կարծիքը,
- գիտական ղեկավարը կամ գրախոսը ներկայացրել են բացասական կարծիք,
- չի անցել նախապաշտպանություն:

of the field, scientific institutions and other institutions review master's thesis. The main employee of the EU cannot be an external reviewer.

5.8 1-2 days before the defense of the Master's thesis, the graduate has the right to get acquainted with the reviewer's remarks and prepare his answers to them, accepting or rejecting them with valid arguments.

5.9 Graduates, who have completed the studies and have accumulated the relevant credits defined by the education program, are approved to defend the Master's thesis. The list of graduates allowed to defend the Master's thesis is approved by the EU Rector upon presentation of the Faculty Dean 2 weeks before the summative certification.

5.10 The defense of Master's thesis is held for students in the full-time education system in May, for students in the part-time education system in December.

5.11 The Master's thesis is approved to defend in the case of the positive feedbacks of the supervisor and the reviewer, ensuring the appropriate originality of the work and the permission of the head of the chair.

5.12 The Master's thesis is not approved to defend if:

- the graduate has not completed the theoretical course,
- has violated the requirements for the completion of Master's thesis,
- there has been inconsistency in terms and forms of presentation of Master's thesis,
- the supervisor's or reviewer's feedback has been missing,
- the scientific supervisor has presented a negative feedback,
- the graduate has not passed the pre-defense.

5.13 Մագիստրոսական թեզի պաշտպանու-թյունը անցկացվում է ամփոփիչ ատեստավոր-ման հանձնաժողովի բաց նիստում՝ հանձնա-ժողովի կազմի երկու երրորդից ոչ պակաս անդամների ներկայության դեպքում: Հանձնաժողովի նախագահի կամ նրա փոխարինողի ներկայությունը պարտադիր է:
5.14Մագիստրոսական թեզի պաշտպանու-թյան ընթացքը արձանագրվում է և ձայնա-գրվում: Ձայնագրությունը պահպանվում է արդյունքները հրապարակելուց հետո 6 ամիս:
5.15Մագիստրոսական թեզի պաշտպանու-թյան ժամանակ շրջանավարտը մինչև 15 րոպեի ընթացքում ամփոփիչ ատեստա-վորման հանձնաժողովին է ներկայացնում աշխատանքի հիմնական դրույթները, որի համար նախապես, ղեկավարի հետ համա-ձայնեցնելով, պատրաստում է ելույթ:
5.16 Ելույթից հետո շրջանավարտին տրվում են հարցեր:
5.17 Հարց ու պատասխանից հետո ներկայացվում է ղեկավարի և գրախոսի կարծիքները:
5.18Գրախոսի կարծիքը ընթերցում է ամփո-փիչ ատեստավորման հանձնաժողովի ան-դամներից որևէ մեկը, շրջանավարտը պա-տասխանում է արված դիտողություններին:
5.19Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովը պարտավոր է մագիստրոսի գնահա-տումը իրականացնել օբյեկտիվ և թափանցիկ ձևով:
5.20 Մագիստրոսի գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած գնահատականների միջինն է:
5.21Մագիստրոսի մագիստրոսական թեզը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ մագիստրանտի պաշտպանության ամբողջ ընթացքում:

### *6. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի ձևավորումը*

6.1 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովը (նախագահ և անդամներ) կազմավոր-վում է ըստ մասնագիտության կամ կրթական ծրագրի՝ ուսուցման բոլոր ձևերի համար:

5.13 The defense of the Master’s thesis is held in the open session of the summative certification committee, in the presence of not less than two-thirds of the members of the committee. The presence of the Chairperson of the committee or his/her substitute is mandatory.
5.14 The process of the Master’s thesis defense is recorded. The recording is kept for 6 months after the publication of the results.
5.15. During the defense of the Master’s thesis, the graduate presents the main provisions of the work to the summative certification committee within 15 minutes, for which he prepares a speech beforehand, in agreement with the supervisor.
5.16 After the speech, the graduate is asked questions.
5.17 After the question and answer session, the feedbacks of the supervisor and reviewer are presented.
5.18 One of the members of the summative certification committee reads the reviewer’s feedback, the graduate responds to the remarks made.
5.19 The summative certification committee is obliged to assess the student in an objective and transparent manner.
5.20 The student's grade is the average of the marks assigned by the members of the summative certification committee.
5.21 The master's thesis is assessed only by the members of the summative certification committee who has been present during the entire defense of the given Master's student.

### *6. Formation of the summative certification committee*

6.1 The summative certification committee (Chairperson and members) is formed according to specialty or educational program for all forms of education.

6.2 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի նախագահին, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ, նշանակում է ԵՀ ռեկտորը՝ համապատասխան ոլորտի (բնագավառի) գործընկեր կազմակերպությունների, գերա-տեսչությունների, ակադեմիական հաստա-տությունների գիտական աստիճան ունեցող մասնագետներից, ովքեր տվյալ հաստա-տության աշխատողներ չեն և նախորդող երեք տարիներին չեն եղել տվյալ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ:

6.2 The Chairperson of the summative certification committee is appointed by the EU Rector, on the proposal of the Faculty Dean. Th Chairperson is elected from among the specialists with academic degrees from partner organizations, departments, academic institutions of the relevant field, who is not the main employee of the given institution and has not been the Chairperson of the given summative certification committee for the previous three years.

6.3 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի կազմը հաստատում է ԵՀ ռեկտորը՝ ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ, ամփոփիչ ատեստավորումից առնվազն երեք շաբաթ առաջ:

6.3 The composition of the summative certification committee is approved by the EU Rector, upon the presentation of the Faculty Dean, at least three weeks before the summative certification.

6.4 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի կազմում կարող են ընդգրկվել տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչները, համապատասխան ֆակուլտետի ղեկավարը կամ նրա տեղակալը, ամբիոնների վարիչ-ները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչները:

6.4 The summative certification committee may include representatives of employers and academic institutions in the given field, the Dean of the relevant faculty or his/her Deputy, heads of chairs, representatives of the academic staff.

6.5 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի նիստերն արձանագրում է քարտու-ղարը, ով տվյալ հաստատության աշխատա-կից է և հանձնաժողովի անդամ չէ:

6.5 The secretary, who is an employee of the given institution and is not a member of the committee, records the sessions of the summative certification committee.

6.6 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի կազմը պետք է ունենա կենտ թվով անդամներ և առնվազն 50%-ը լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ:

6.6 The composition of the summary certification committee should have an odd number of members and at least 50% should be non-employees of the given institution.

6.7 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի նախագահի բացակայության դեպ-քում ԵՀ ռեկտորի հրամանով նշանակվում է փոխարինող՝ հանձնաժողովի կազմից:

6.7 In the absence of the Chairperson of the summative certification committee, a substitute is appointed from the committee by order of the EU Rector.

6.8 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովն իր գործունեության ընթացքում ղեկա-վարվում է թիվ 1282-Ն ընդունված 07.11.2017թ. «ՀՀ բարձրագույն մասնագիտա-կան կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգով, սույն կարգով, սույն կարգից բխող այլ կարգերով և մեթոդական ուղեցույցներով:

6.8 The summative certification committee is guided by the Order No1282-N on "Summative certification of graduates of institutions implementing higher professional academic programs of the Republic of Armenia" adopted on November 7, 2017, this order, other orders and methodological guidelines.

6.9 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի գործառույթներնեն՝

ա) ստուգել շրջանավարտի պատրաստվածության մակարդակի համապատասխանությունը կրթական ծրագրով սահմանված նպատակներին և վերջնարդյունքներին,

բ) կայացնել որոշում ամփոփիչ ատեստավորման արդյունքներով շրջանավարտին որակավորում շնորհելու (կամ չշնորհելու) և նրան բարձրագույն կրթության համապատասխան դիպլոմ տալու (կամ չտալու) վերաբերյալ,

գ) մշակել և ներկայացնել առաջարկություններ տվյալ մասնագիտությամբ մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման վերաբերյալ:

6.10 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի աշխատանքների ժամանակացույցը, որը համաձայնեցվում է հանձնաժողովի նախագահի հետ, ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատում է ԵՀ ռեկտորը:

6.11 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի աշխատանքների ժամանակացույցը հրապարակվում է շրջանավարտների համար հասանելի միջոցներով՝ մագիստրոսական թեզերի պաշտպանությունից առնվազն երկու շաբաթ առաջ:

6.9The functions of the summative certification committee are:

a) to check the compliance of the graduate's preparation level with the goals and learning outcomes defined by the educational program,
b) to make a decision on awarding (or not awarding) a qualification to the graduate and awarding (or not awarding) him a corresponding diploma of higher education based on the results of the summative certification,
c) to develop and present recommendations regarding the further improvement of the quality of preparation of specialists in the given profession.

6.10 The schedule of the work of the summative certification committee, which is agreed with the Chairperson of the committee, is approved by the EU Rector upon the presentation of the Faculty Dean.

6.11 The schedule of the work of the summative certification committee is published by means available to the graduates at least two weeks before the defense of the Master’s thesis.

### 7. *Մագիստրոսական թեզի գնահատումը*

7.1 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի անդամները գնահատում են մագիստրոսական թեզը ըստ հետևյալ ցուցանիշների.

- ***Հիմնավորված է թեմայի արդիականությունը, հստակ սահմանված են աշխատանքի օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները*** (առավելագույնը՝ 10 միավոր),
- ***Ստացված արդյունքները հանդիսանում են առաջադրված խնդիրների լուծումներ և պարունակում են գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ*** (առավելագույնը՝ 30 միավոր),
- ***Աշխատանքը իրականացված է ինքնուրույն, շարադրված է հստակ,***

### 7. *Assessment of Master’s thesis*

7.1 The members of the summative certification committee assess the Master’s thesis according to the following indicators:

- **The relevance of the topic has been justified, the object, subject, goal, objectives of the work are clearly defined, an analysis of relevant literature is carried out** (maximum 10 points),
- **The obtained results are solutions to the set objectives and contain scientific, methodical or practical novelty** (maximum 30 points),
- **The work is carried out independently, it is written clearly,**

***բովանդակությունը ունի տրամաբանական կառուցվածք*** (առավելագույնը՝ 5 միավոր),

- ***Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունը*** (առավելագույնը՝ 40 միավոր),
- ***Հարցերին ու դիտողություններին տրվել են հիմնավոր ու սպառիչ պատասխաններ*** (առավելագույնը՝ 15 միավոր):

7.2 Մագիստրոսական թեզի պաշտպանու-թյան արդյունքները գնահատվում են «գերա-զանց», «լավ», «բավարար», «անբավարար» համաձայն ԵՀ մագիստրոսական թեզի աշխատանքի գնահատման ձևաթերթով սահմանված չափորոշիչների (*հավելված 5-6):*

7.3 Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է «անբավարար»:

7.4 Մագիստրոսական թեզի գնահատա-կանները հայտարարվում են նույն օրը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստի արձանագրությունը կազմելուց հետո՝ մեկ ժամվա ընթացքում:

7.5 Հիմք ընդունելով մագիստրոսական թեզի պաշտպանության դրական («բավարար», «լավ», «գերազանց») արդյունք-ների վերաբերյալ արձանագրությունը՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը կայացնում է որոշում շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելու և նրան բարձրագույն կրթության դիպլոմ տալու մասին: Բացասական («անբավարար») արդյունքի դեպքում շրջանավարտին որակավորում չի շնորհվում և բարձրագույն կրթության դիպլոմ չի տրվում:

7.6 Գերազանցության դիպլոմ տրվում է ամփոփիչ ատեստավորումը «գերազանց» գնահատականով հանձնած այն շրջանա-վարտներին, ովքեր ապահովել են միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90 %-ը:

7.7 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի որոշումներն ընդունվում են հանձնա-ժողովի փակ նիստում: Շրջանավարտի

**the content has a logical structure** (maximum 5 points),

- **Public presentation of Master's thesis** (maximum 40 points),
- **Reasonable and comprehensive answers have been given to the questions and comments** (maximum 15 points).

7.2 The results of the Master's thesis defense are assessed as "excellent", "good", "satisfactory", "unsatisfactory" according to the standards set by the EU Master's thesis assessment form (appendix 5-6).

7.3 If plagiarism is detected during the public defense, the work is assessed as "unsatisfactory".

7.4 The grades of the Master's thesis defense are announced on the same day, after drawing up the minutes of the meeting of the summative certification committee, within one hour.

7.5 Based on the report on the positive ("satisfactory", "good", "excellent") results of the defense of the graduate paper, the summative certification committee makes a decision to award the graduate with the appropriate qualification and award him a diploma of higher education. In case of a negative ("unsatisfactory") result, the graduate is awarded neither a qualification nor a diploma of higher education.

7.6 A diploma of excellence is awarded to those graduates who have passed the summative certification with an "excellent" grade, and who have secured 90% of the maximum value of the average qualitative assessment (AQA).

7.7 The decisions of the summative certification committee are adopted in the closed session of the committee. The grade

մագիստրոսական թեզի գնահատականը որոշվում է հանձնաժողովի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակված գնահատականների միջին թվաբանականով:

7.8 Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի բոլոր որոշումները քարտուղարն արձանագրում է ԵՀ կողմից սահմանված կարգով: Արձանագրությունները ստորագրում են հանձնաժողովի նախագահը և նիստին մասնակցած անդամները:

7.9 Մագիստրոսական թեզի պաշտպանությանը թույլատրված, բայց չներկայացած կամ «անբավարար» գնահատված շրջանա-վարտին թույլատրվում է նոր պաշտպա-նություն՝ հաջորդ ուսումնական տարվա ավարտին կամ հետագա տարիներին՝ ԵՀ սահմանած կարգով և ժամկետներում: Մագիստրոսական թեզի վերահանձնումն իրականացվում է համաձայն թիվ 1282-Ն ընդունված 07.11.2017թ. «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատես-տավորման» կարգի, սույն կարգի և սահմանված այլ ընթացակարգերի:

7.10 Բուհի կողմից արտոնված ձևերով և ժամկետներում արտասահմանում մասնակի ուսումնառություն անցած շրջանավարտների մագիստրոսական թեզի պաշտպանությունը կարող է իրականացվել Ֆակուլտետի դեկանի կողմից առաջադրված և ԵՀ ռեկտորի կողմից հաստատված առանձին ժամկետներում՝ թիվ 1282-Ն ընդունված 07.11.2017թ. «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի, սույն կարգի և սահմանված ընթացակարգի համաձայն:

7.11 ԵՀ և այլ մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող համատեղ կրթական ծրագրերի շրջանավարտների համար կարող է կազմակերպվել համատեղ ամփոփիչ ատեստավորում՝ ԵՀ-ի և տվյալ հաստատությունների միջև նախապես փոխհամաձայնեցված և համապատասխան պայմանագրով հաստատված ընթացակար-

of the graduate's work is determined by the arithmetic mean of the marks assigned by each member of the committee.

7.8 The secretary records all the decisions of the summative certification committee according to the Order established by the EU. The minutes are signed by the Chairperson of the committee and the members who participated in the session.

7.9 A graduate who is approved to defend his Master’s thesis, but does not appear or is assessed as "unsatisfactory", is allowed a new defense at the end of the next academic year or in subsequent years, in accordance with the Order and terms set by the EU. Reassignment of Master’s thesis is carried out in accordance with the Order No. 1282-N on "Summative certification of graduates of institutions implementing higher professional academic programs of the Republic of Armenia", adopted on November 7, 2017, this Order, other orders and procedures.

7.10 The Master’s thesis defense of graduates, who have completed partial studies abroad in the forms and terms approved by the HEI, can be carried out in separate terms nominated by the Faculty Dean and approved by the EU Rector. This defense is being carried out according to the Order No. 1282-N on "Summative certification of graduates of institutions implementing higher professional academic programs of the Republic of Armenia", adopted on November 7, 2017, this Order, other procedures.

7.11 For the graduates of the joint educational programs implemented by the EU and other professional educational institutions, a joint summative certification can be organized by mutually agreed and contractually approved procedures between the EU and the relevant institutions maintaining the provisions of the Order No. 1282 on "Summative certification

գերով՝ պահպանելով թիվ 1282-Ն ընդունված 07.11.2017թ. «ՀՀ բարձրագույն մասնագի-տական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի, սույն կարգի և սահմանված ընթացակարգի կանոնների:

of graduates of institutions implementing higher professional academic programs of the Republic of Armenia", adopted on November 7, 2017, this Order and other procedures.

7.12 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի նախագահը ներկայացնում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունը (հավելված 8):

7.12 The Chairperson of the summative certification committee presents the report of the summative certification committee (appendix 8).

7.13 Ամփոփիչ ատեստավորման հանձնա-ժողովի հաշվետվությունը քննարկվում է ԵՀ գիտական խորհրդի նիստում: Ամփոփիչ ատեստավորման ավարտից հետո ԵՀ-ն ամփոփ տեղեկատվություն է ներկայացնում ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

7.13 The report of the summative certification committee is discussed at the session of the EU Scientific Council. After the summative certification, the EU submits summary information to the RA Ministry of Education, Science, Culture and Sports (ESCS).

7.14 Մագիստրոսական թեզի գնահատա-կանը («անբավարար», «բավարար», «լավ», «գերազանց») կարող է լրացուցիչ քննարկվել և բողոքարկվել՝ համաձայն սույն կարգի 8-րդ կետի:

7.14 The grade of the Master’s thesis ("unsatisfactory", "satisfactory", "good", "excellent") can be further discussed and appealed in accordance with Provision 8 of this Order.

7.15 Շրջանավարտը իրավունք ունի սույն կարգով սահմանված 8-րդ կետին համապա-տասխան պահանջել ամփոփիչ ատեստա-վորման գնահատականի լրացուցիչ քննար-կում և/կամ բողոքարկում, եթե առկա են սույն կարգի 5-րդ կետի 13-21-րդ ենթակետերով սահմանված ընթացակարգային դրույթների խախտումներ:

7.15 The graduate has the right to request an additional discussion and/or appeal of the summative certification grade in accordance with Provision 8 of this Order if there are procedural violations defined in sub-provisions 13-21 of provision 5 of this Order.

## *8. Ամփոփիչ ատեստավորման գնահատականի լրացուցիչ քննարկում և բողոքարկում*

## *8. Further discussion and appeal of summative certification grade*

8.1 Ամփոփիչ ատեստավորման գնահատա-կանի լրացուցիչ քննարկումն ու բողոքարկումը մագիստրանտի գնահատման վերանայումն է:

8.1 A further discussion and appeal of the summative certification grade is the review of the assessment of the student.

8.2 Մինչև ամփոփիչ ատեստավորումը մագիստրանտը պետք է տեղեկացված լինի գնահատման կարգին, սկզբունքներին, բաղադրիչներին, ինչպես նաև գնահատման լրացուցիչ քննարկման և բողոքարկման ընթացակարգին:

8.2 Before the summative certification, the graduate student must be informed about the assessment order, principles, components, along with the procedures of further appeal and review.

8.3 Ամփոփիչ ատեսատավորման հանձնա-ժողովի նախագահի կողմից գնահատման արդյունքների հրապարակումից հետո շրջա-նավարտը մեկ ժամվա ընթացքում կարող է

8.3 After the publication of the assessment results by the Chairperson of the summative certification committee, the graduate can

բողոքարկել ամփոփիչ ատեստավորման գնահատականը:

8.4 Ամփոփիչ ատեստավորման բողոքար-կումը իրականացվում է շրջանավարտի հանձ-նաժողովի նախագահին ներկայացված գրա-վոր դիմումի հիման վրա (տե՛ս հավելված 9):

8.5 Ամփոփիչ ատեստավորման գնահատա-կանի բողոքարկումը իրականացվում է նույն օրը:

8.6 Ամփոփիչ ատեստավորման գնահատ-ման արդյունքի բողոքարկման քննարկմանը բացի հանձնաժողովի անդամներից մասնակ-ցում են նաև ԵՀ վարչական անձնակազմի աշխատակիցը, որը չի հանդիսանում տվյալ հանձնաժողովի անդամ, ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածու-թյունները նախապես հաստատվում են ԵՀ ռեկտորի կողմից և շրջանավարտը:

8.7 Ամփոփիչ ատեստավորման գնահատ-ման արդյունքների բողոքարկման ընթացքում հանձնաժողովի անդամները լսում են տվյալ շրջանավարտի պատասխանի ձայնագրու-թյունը:

8.8 Ձայնագրությունը լսելու արդյունքում գնահատականի հաշվարկման, ամփոփման կամ այլ ընթացակարգային սխալների հայտնաբերման դեպքում հանձնաժողովը՝

ա) վերանայում է մագիստրանտի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը ազդել է գնահատման արդյունքի վրա,

բ) գնահատականը թողնում է անփոփոխ, եթե հայտնաբերված խախտումը չի ազդել գնահատման արդյունքի վրա:

8.9 Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամ-ների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

ա) գնահատականը թողնել անփոփոխ,

բ) գնահատականը բարձրացնել:

8.10 Ընդունված որոշման վերաբերյալ քար-տուղարը կազմում է արձանագրություն (տե՛ս հավելված 10), որը ստորագրում են հանձնա-ժողովի նախագահը, ԵՀ վարչական անձնա-կազմի ներկայացուցիչը, ուսանողական խորհրդի ներկայացուցիչը և շրջանավարտը:

appeal the summative certification grade within an hour.

8.4 The summative certification appeal is carried out based on a written application submitted to the Chairperson of the certification committee by the graduate (see appendix 9).

8.5The appeal of the summative certification grade is carried out on the same day.

8.6 In addition to the committee members, the EU administrative staff member, who is not a member of the given committee, the representative of the student council, whose nominations are approved in advance by the EUA Rector, and the graduate also participate in the discussion of the appeal of the summative certification assessment result.

8.7 During the appeal of the summative certification grade, the committee members listen to the recording of the graduate’s answer.

8.8 In case of procedural violations revealed as a result of listening to the recording, the committee:

a) revises the student's grades if the detected violation affected the assessment result;
b) leaves the grade unchanged if the detected violation did not affect the assessment result.

8.9 As a result of the appeal, a decision is made by open voting, based on majority of the votes of the committee members:

a) to leave the grade unchanged;
b) to improve the grade.

8.10 The secretary draws up a protocol (see appendix 10) regarding the adopted decision, which is signed by the Chairperson of the committee, the representative of the administrative staff of the EU, the

representative of the student council and the graduate.

8.11 Ներկաների կողմից կայացված որոշմանը անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

8.11In case of disagreement with the decision made by the attendees, a special feedback is submitted in a written form, which is attached to the minute.

8.12 Բողոքարկման արդյունքում գնահատա- կանի փոփոխման դեպքում արձանագրու- թյունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

8.12 In case of a change of a grade as a result of an appeal, a corresponding entry is made in a special record book.

*Հավելված 1. /Հայերեն/*

**ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (16 pt, Bold)**

**_______________________________ ԱՄԲԻՈՆ (14 pt, Bold)**

# ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ (30 pt., Bold)

**ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ (18 pt., Bold)**

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ (18 pt., Bold)**

«_____________________________________________» մասնագիտության

_____________________________ մագիստրոսի որակավորման հայցման **(14 pt., Bold)**

ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ____________________________ **(14 pt., Bold)**
ստորագրություն գիտական աստիճան, կոչում, Ա.Ա.Հ.

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է
ԲՄԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
______________ ամբիոնի վարիչ՝ ____________ ______________________
ստորագրություն գիտական աստիճան, կոչում, Ա.Ա.Հ.

**ԵՐԵՎԱՆ 20__ (14 pt., Bold)**

*Appendix 1. /English/*

**RA MINISTRY OF ESCS**

**EUROPEAN UNIVERSITY (16 pt, Bold)**

**____________________________ CHAIR (14 pt, Bold)**

# MASTER'S THESIS (30 pt., Bold)

**FULL NAME (18 pt., Bold)**

**TITLE OF THE MASTER'S THESIS (18 pt., Bold)**

“____________________” Specialty

MA Degree in _______________________________________

**(14 pt., Bold)**

SUPERVISOR: ___________ _________________________ **(14 pt., Bold)**

signature full name, academic degree, title

THE MASTER'S THESIS MEETS THE REQUIREMENTS AND IS WARRANTED TO DEFEND

Head of ____________ Chair: ___________ __________________

signature full name, academic degree, title

**Yerevan 20__(14 pt., Bold)**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Ներածություն………………………………………………………………………….. 3

Գլուխ 1. ……………………………………………………………………………….

1.1 ………………………………………………………………………………………

1.2. ………………………………………………………………………………………

Գլուխ 2. ……………………………………………………………………………….

2.1 ………………………………………………………………………………………

2.2 ………………………………………………………………………………………

Գլուխ 3. ……………………………………………………………………………….

3.1 ………………………………………………………………………………………

3.2 ………………………………………………………………………………………

Եզրակացություններ և առաջարկություններ ………………………………………

Օգտագործված գրականության ցանկ ………………………………………………

Հավելվածներ ………………………………………………………………………

*Appendix 2. /English/*

**CONTENTS**

Introduction..........................................................................................

Chapter 1. ..........................................................................................

1.1 ..........................................................................................

1.2. ..........................................................................................

Chapter 2. ..........................................................................................

2.1 ..........................................................................................

2.2 ..........................................................................................

Chapter 3. ..........................................................................................

3.1 ..........................................................................................

3.2 ..........................................................................................

Conclusions and recommendations.........................................................

References..........................................................................................

Appendices ..........................................................................................

*Հավելված/ Appendix 3*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/ EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA**

**ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔ/ SUPERVISOR'S FEEDBACK**

Մագիստրոսական թեզի վերաբերյալ/ on Master's thesis

______________________________________ ֆակուլտետի/ faculty, student of the

______________________________________ մասնագիտության ուսանող/ specialty

________________________________________________________________________

Ա.Հ.Ա. / Full name of the student

ԹԵՄԱՆ/ THE TITLE ________________________________________________

________________________________________________________________

| N | Հարց/ Question | Այո, մասամբ, ոչ / Yes, partly, no |
|---|---|---|
| Աշխատանքը համապատասխանում է թեմային և դրված նպատակին / The work corresponds to the topic and the set goal | | |
| Աշխատանքի կատարման ընթացքում մագիստրանտը/ During the work, the student: | | |
| 1. | Ցուցաբերել է առաջադրված խնդիրների լուծման ինքնուրույնություն / has demonstrated independence in solving the set objectives | |
| 2. | Ցուցաբերել է համապատասխան գիտելիքներ / has demonstrated relevant knowledge | |
| 3. | Ցուցաբերել է գիտական աշխատանքի կատարման հակումներ/ has demonstrated aptitude for scientific work | |
| 4. | Ուսումնասիրել է բավարար ծավալի գրականություն / has studied a sufficient amount of literature | |
| 5. | Կիրառել է հետազոտման արդի մեթոդներ / has applied modern research methods | |
| 6. | Պահպանել է ավարտական աշխատանքի կատարման ժամանակացույցը/ has maintained the schedule of completing the graduation paper | |
| 7. | Պահպանել է մագիստրոսական թեզի ձևավորման պահանջները / has maintained Master's thesis formation requirements | |

________________________________________________________________

________________________________________________________________

Մագիստրոսական թեզի համապատասխանության և պաշտպանության թույլատրելու վերաբերյալ / Regarding the eligibility of the master's thesis and allowing the defense

________________________________________________________________

________________________________________________________________

Մագիստրոսական թեզի յուրօրինակությունը/ Originality of the work (uniqueness) __________ %, (հիմքը՝ աշխատանքի ստուգված էլեկտրոնային ֆայլը/ based on the reviewed electronic file of the work):

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՂԵԿԱՎԱՐ/ MASTER'S THESIS SUPERVISOR:

____________________ ________________________________________

ստորագրություն/ signature — գիտական աստիճան, կոչում, Ա.Ա.Հ./ full name, academic degree, title

«____» ___________ 20__

*Հավելված/ Appendix 4*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/ EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA**

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ/ REVIEW

Մագիստրոսական թեզի վերաբերյալ/ on Master's thesis

_______________________________________________ ֆակուլտետի/ faculty, student of the

_____________________________________________ մասնագիտության ուսանող/ specialty

______________________________________________________________________________

Ա.Հ.Ա. / Full name of the student

ԹԵՄԱՆ/ THE TITLE ____________________________________________________________

______________________________________________________________________________

| N | Հարց/ Question | Այո, մասամբ, ոչ / Yes, partly, no |
|---|---|---|
| 1. | Մագիստրոսական թեզի թեման համապատասխանում է մասնագիտությանը/ The topic of the Master’s thesis corresponds to the specialty | |
| 2. | Մագիստրոսական թեզի թեման արդիական է/ The topic of the Master’s thesis is relevant | |
| 3. | Մագիստրոսական թեզի թեման ունի հեռանկարային նշանակություն/ The topic of the Master’s thesis has a prospective significance | |
| 4. | Մագիստրոսական թեզի բովանդակությունը համապատասխանում է գործող պահանջներին/ The content of the Master’s thesis meets the current requirements | |
| 5. | Մագիստրոսական թեզում օգտագործված են հետազոտման առաջավոր մեթոդներ/ Advanced research methods are used in the Master’s thesis | |
| 6. | Մագիստրոսական թեզը կատարված է գիտական պատշաճ մակարդակով/ The Master’s thesis has been completed at an appropriate scientific level | |
| 7. | Ուսանողն օգտվել է անհրաժեշտ քանակի գրականությունից/ The student has used the necessary amount of literature | |
| 8. | Մագիստրոսական թեզը ձևակերպված է գործող նորմատիվ փաստաթղթերին համապատասխան/ The Master’s thesis is written in accordance with the current normative documents | |

Նկատված թերություններ/ Observed incompleteness:

1.____________________________________________________________________________

______________________________________________________________________

2. __________________________________________________________________________

_____________________________________________________________________________

3.____________________________________________________________________________

_________________________________________________________________

Մագիստրոսական թեզը թույլատրվում է պաշտպանության/ Master’s thesis is approved to defend: ԱՅՈ/YES / ՈՉ/NO (underline/ընդծել)

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԳՐԱԽՈՍ/ REVIEWER OF MASTER'S THESIS:

________________ ___________________________________

ստորագրություն/ signature գիտական աստիճան, կոչում, Ա.Ա.Հ./ full name, academic degree, title

«____» ___________ 20__

*Հավելված/ Appendix 5.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/ EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA**
**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ PROTOCOL**
**ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ/ OF SUMMATIVE CERTIFICATION COMMITTEE ON THE GRADUATION PAPER DEFENSE**
**«___» _____________ 20___Թ.-Ի N ____ ՆԻՍՏԻ/ SESSION**

20___/20___ ՈՒՍՏԱՐՎԱ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ՝ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ/ REGARDING THE CONFIRMATION OF RESULTS OF MASTER'S THESIS DEFENSE OF GRADUATES BY SUMMATIVE CERTIFICATION OF THE _______/______ ACADEMIC YEAR

| N | Կոդ/ Code | Ազգանուն Անուն Հայրանուն/ Last Name First Name Middle Name/ Patronymic | ***Գնահատման չափանիշներ/ Assessment criteria (Առավելագույնը 100 միավոր/ Maximum 100 points)*** | | | | | **Ընդամենը/ Total** |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հիմնավորված է թեմայի արդիականությունը, հստակ սահմանված են աշխատանքի օբյեկտը, առարկան, նպատակը, խնդիրները / The relevance of the topic has been justified, the object, subject, goal, objectives of the work are clearly defined, an analysis of relevant literature is carried out (առավելագույնը՝ 10 միավոր/ maximum 10 points) | Ստացված արդյունքները հանդիսանում են առաջադրված խնդիրների լուծումներ և պարունակում են գիտական, մեթոդական կամ գործնական նորույթ/ The obtained results are solutions to the set objectives and contain scientific, methodical or practical novelty (առավելագույնը ՝ 30 միավոր/ maximum 30 points) | Աշխատանքը իրականացված է ինքնուրույն, շարադրված է հստակ, բովանդակությունը ունի տրամաբանական կառուցվածք / The work is carried out independently, it is written clearly, the content has a logical structure (առավելագույնը՝ 5 միավոր/ maximum 5 points) | Ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությունը/ Public presentation of master’s thesis (առավելագույնը՝ 40 միավոր/ maximum 40 points) | Հարցերին ու դիտողություններին տրվել են հիմնավոր ու սպառիչ պատասխաններ/ Reasonable and comprehensive answers have been given to the questions and comments (առավելագույնը՝ 15 միավոր/ maximum 15 points) | |
| **1.** | | | | | | | | |
| **2.** | | | | | | | | |
| **3.** | | | | | | | | |

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ/ Chairperson of the summative certification committee:

_______________________________________ ________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

Հանձնաժողովի անդամներ/ Members of the committee:

_______________________________________ ________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

_______________________________________ ________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

_______________________________________ ________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

_______________________________________ ________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

*Հավելված/ Appendix 6.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/ EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ PROTOCOL N ____

**ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ/ OF THE SESSION OF SUMMOTIVE CERTIFICATION COMMITTEE ON THE MASTER'S THESIS DEFENSE**

Նիստը կայացավ/ The session was held on «_____» _____________ 20___ թ. ժամը/ at_______ o'clock

________________________ ֆակուլտետի/ faculty of _________________ մասնագիտության/ specialty

_________________________________________________________________________ շրջանավարտի

(Շրջանավարտի անուն, ազգանուն, հայրանուն)

_________________________________________________________________________ of the graduate

( Last Name First Name Middle Name/ Patronymic of the Graduate)

____________________________________________________________________________________

_________________________________________________________________ թեմայով մագիստրոսական թեզի քննարկման վերաբերյալ / on the subject regarding the discussion of the Master's thesis.

Մասնակցում էին/ The participants were:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ/ Chairperson of the summative certification committee:

____________________________________ __________________

(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

Հանձնաժողովի անդամներ/ Members of the committee:

____________________________________ __________________

(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

____________________________________ __________________

(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

____________________________________ __________________

(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

____________________________________ __________________

(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

Մագիստրոսական թեզը կատարվել է/ The Master's thesis has been written under ________________________

(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name)

ղեկավարությամբ/ supervision

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին ներկայացված են հետևյալ նյութերը/ The summative certification committee has been presented with the following materials:

1. Մագիստրոսական թեզը/ The Master's thesis,
2. Ֆակուլտետի դեկանի կողմից տրված ակադեմիական տեղեկագիրը (ՄՈԳ-ը)/ The academic bulletin issued by the Faculty Dean (AQA),
3. Մագիստրոսական թեզի վերաբերյալ ղեկավարի կարծիքը/ Supervisor's feedback on the Master's thesis,
4. Մագիստրոսական թեզի վերաբերյալ գրախոսականը/ The review of the Master's thesis,

Մագիստրոսական թեզը ներկայացնելուց հետո, շրջանավարտին տրվել են հետևյալ հարցերը/ After presenting the Master's thesis, the graduate was asked the following questions:

1. ____________________________________________________________________________

____________________________________________________________________________________

2. ____________________________________________________________________________

____________________________________________________________________________________

3. ____________________________________________________________________________

(հարց տվող անձի ազգանունը, հարցի բովանդակությունը/ the surname of the person asking the question, the content of the question)

____________________________________________________________________________________

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը որոշեց/ The summative certification committee decided:

1. Համարել, որ շրջանավարտ/ To consider that the graduate ________________________________________-ը

(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name)

կատարել և պաշտպանել է Մագիստրոսական թեզը / completed and defended the Master's thesis with a grade of «_______________________________________________________» գնահատականով:

(թվերով, տառերով / in numbers, letters)

2. Շնորհել մագիստրոսի որակավորում / To award Master's degree in __________________________________ մասնագիտությամբ / specialty:

3. Շնորհել դիպլոմ/ To award a diploma ______________________________________________________________

(գերազանցության, ոչ գերազանցության/ excellence, non-excellence)

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ/ Chairperson of the summative certification committee:

_________________________________________ _____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

Հանձնաժողովի անդամներ/ Members of the committee:

_________________________________________ _____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

_________________________________________ _____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

_________________________________________ _____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

_________________________________________ _____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

Քարտուղար/ Secretary: ___________________________________ ___________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

*Հավելված/ Appendix 7.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/ EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA**

**________________________ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ/ FACULTY**

**_______________ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ/ SPECIALIZATION**

**ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**/ REPORT OF SUMMATIVE CERTIFICATION COMMITTEE**

«____» ____________ 20___

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցած շրջանավարտների թիվը/ The number of graduates who has participated in the summative certification: ______________________________________________

(թվերով, տառերով / in numbers, letters)

Քննությունը հանձնած շրջանավարտների ստացած գնահատականները/ The grades obtained by the graduates who passed the exam:

«գերազանց» / "excellent"

______________________________________________________________

(թվերով, տառերով/ in numbers, letters)

«լավ» / "good"

______________________________________________________________

(թվերով, տառերով/ in numbers, letters)

«բավարար» / "satisfactory"

______________________________________________________________

(թվերով, տառերով/ in numbers, letters)

«անբավարար» / "inadequate"

______________________________________________________________

(թվերով, տառերով/ in numbers, letters)

Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականների թիվը / The number of grades changed as a result of the appeal: ______________________________________________

(թվերով, տառերով / (in numbers, letters)

Հանձնաժողովի առաջարկությունները մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ/ Recommendations of the committee in the direction of further improvement of the quality of training of specialists:

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

______________________________________________________________

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ/ Chairperson of the summative certification committee:

____________________________________________ ______________________

(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

*Հավելված/ Appendix 8.*

Հայաստանի եվրոպական համալսարանի
______________________________ ֆակուլտետի
_____________________ մասնագիտության գծով ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ ______________________________ին
(Անուն, Ազգանուն, Հայրանուն)

նույն մասնագիտության շրջանավարտ __________
_______________________________________ից
(Անուն, Ազգանուն, Հայրանուն)

European University of Armenia
___________________________________ faculty
To Chairperson of the summative certification committee for this specialty ________________
(Full name)

From graduate of the same specialty
________________________________________
(Full name)

**ԴԻՄՈՒՄ**

Համաձայն «ՀԵՀ բակալավրի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման, մագիստրոսական թեզի պատրաստման, պաշտպանության, գնահատման և բողոքարկման» կարգի 8-րդ կետի 3-րդ ենթակետի՝ բողոքարկում եմ ամփոփիչ ատեստավորման արդյունքում իմ ստացած ________________
______________________ միավորը:
(թվերով և տառերով)

Խնդրում եմ համաձայն գործող կարգի ապահովել բողոքարկումը:

**APPLICATION**

According to the 3rd sub-provision of Provision 8 of the Order on "Summative certification of EUA Master's graduates: the preparation, defense, assessment and appeal of graduation papers", I am appealing the score________________
(in numbers, letters)

I received as a result of the certification.

Please endure the appeal in accordance with the applicable form.

Դիմող/ Applicant: ____________________________________________ ____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

«___» _____________ 20___

*Հավելված/ Appendix 8.*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ/ EUROPEAN UNIVERSITY OF ARMENIA**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ MINUTE N ____**

Մագիստրատուրայի ______________________________________ մասնագիտության բողոքարկման հանձնաժողովի «____»_______________ 20__թ.-ի նիստի

OF THE «____»_______________ 20__ SESSION OF MASTER'S APPEAL COMMISSION ON THIS SPECIALTY

ՀԵՀ «________________________________» մասնագիտության մագիստրատուրայի կրթական ծրագրի ***առկա/հեռակա (ընդգծել)*** ուսուցման ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման բողոքարկման արդյունքում հանձնաժողովը լսեց ձայնագրությունը:

As a result of the summative certification appeal of EUA «_______________________» master's educational program for ***full-time/part-time studies (highlight)***, the committee listened to the recording.

Քննարկեց և բաց քվեարկությամբ որոշեց քննության գնահատականը/ Discussed and decided by open vote, that the exam grade should:

- Բարձրացնել/ be raised by ____________ միավորով և/ point and ____________ միավորը դարձնել/ the grade should be changed into ______________________
- Չբարձրացնել՝ միավորը թողնել անփոփոխ/ not be improved: The grade should be left unchanged ______________________________________________

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ/ Chairperson of the summative certification committee:

________________________________________________ __________________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

Հանձնաժողովի անդամներ/ Members of the committee:

________________________________________________ __________________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

________________________________________________ __________________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

________________________________________________ __________________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

________________________________________________ __________________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

Ռեկտորատի ներկայացուցիչ/ Representative of the rectorate:

________________________________________________ _____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)

Ուսանողական խորհրդի ներկայացուցիչ/ Representative of the Student Council:

________________________________________________ _____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն) (Ստորագրություն)

Շրջանավարտ/ Graduate: ______________________________________ ____________________
(Անուն, Ազգանուն, Հայրանուն/ Full name) (Ստորագրություն/ Signature)